# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2020թ. թիվ 478-Ա

## ՄԵՌԵԼԱԾՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016Թ. ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ԹԻՎ 223-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ  եմ.

1. Լոռու մարզի ծննդօգնություն իրականացնող առողջապահական ընկերություններում արձանագրված մեռելածնության դեպքերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել մշտական գործող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

Ըստ անհրաժեշտության ուսումնասիրել յուրաքանչյուր դեպք և ներկայացնել տեղեկատվություն:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 21.07.2016թ. «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 223-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 25
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունիսի 25-ի
թիվ 478-Ա որոշման

# Կ Ա Զ Մ
## Մեռելածնության դեպքերն ուսումնասիրող մշտական գործող հանձնաժողովի

Լ.Վարդանյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ.

Ա.Ավալյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ, Լոռու մարզի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ

Վ.Մկրտչյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն, Լոռու մարզի գլխավոր ախտաբանաանատոմ

Հ.Աղեկյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ, մանկաբարձ-գինեկոլոգ

Լ.Մկրտումյան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ

Ա.Ազիզյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/25/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ